ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.08.2020
346-13

ՀՀ Քննչական կոմիտեի
նախագահ Հայկ Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Լևոն Գալստյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: 2020թ. հուլիսի 24-ին քաղաքացին ՀՀ Քննչական կոմիտե է ուղարկել տեղեկություն ստանալու հարցում՝ խնդրելով տրամադրել Ամուլսարի հանքի շահագործման հետ կապված Քննչական կոմիտե ներկայացված լիբանանյան «ԷԼԱՐԴ» և ամերիկյան «ԹիԱրՍի» ընկերությունների զեկույցները: Քաղաքացու հարցումը մինչ օրս մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով հարցի հանրային նշանակությունը և գործընթացի թափանցիկության անհրաժեշտությունը, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2019թ-ի մայիսի 31-ին «ԷԼԱՐԴ» և «ԹիԱրՍի» ընկերությունների ընկերությունների կողմից ՀՀ Քննչական կոմիտե ներկայացված Անկախ գնահատման նախնական զեկույցը:
2. 2019թ-ի հունիսի 14-ին «ԷԼԱՐԴ» և «ԹիԱրՍի» ընկերությունների կողմից ՀՀ Քննչական կոմիտե ներկայացված Անկախ գնահատման նախնական զեկույցը:
3. 2019թ-ի հունիսի 14-ին ՀՀ Քննչական կոմիտե ներկայացված Անկախ գնահատման նախնական զեկույցի վերաբերյալ «Լիդիան»-ի ներկայացրած մեկնաբանությունները, որոնք ՀՀ Քննչական կոմիտեն ստացել է հունիսի 28-ին և հուլիսի 4-ին:
4. 2019թ-ի հուլիսի 3-ին ՀՀ Քննչական կոմիտե ներկայացված «Լիդիան»-ի պատասխանները «ԷԼԱՐԴ» և «ԹիԱրՍի» ներկայացուցիչների՝ 2019թ-ի հունիսի 28-ին առաջադրված հարցերին՝ երկրաքիմիական տվյալների և մեղմման միջոցառումների վերաբերյալ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 11):

Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես *էլեկտրոնային եղանակով:*

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան